Հաստատում եմ

Ախթալայի N 1 մ/դ

տնօրեն՝ _______________ (Լ. …հյան)

(ստորագրություն)

13.09.2023թ.

Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

2023-2024 ուստարի **1–ին դասարան**

Դասվար՝ Մ. Մուրադյան

1-ին դասարանի ծնողխորհրդի կազմը՝

Նախագահ՝ Մարիամ Չրաղյան

Անդամներ՝ Գոհար Չիչակյան

Մարիամ Ասլանյան

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը) - Առաջին դասարանում սովորում է 13 աշակերտ՝ 9 տղա, 4 աղջիկ: Դասարանում կան տարբեր ընդունակություններ ունեցող, դաստիարակչական տարբեր մոտեցումներ պահանջող, վարքային տարբեր գծերի տեր սովորողներ: Դասարանի երեխաները շփվող են, շարժուն, չկան միջանձնային խնդիրներ, ընկալում են իրենց առջև դրված դաստիարակչական խնդիրը. սովորողների հոգեբանական, ֆիզիկական և գործնական նախապատրաստում, ուսումնական գործունեությունը ապահովված է:

Դպրոց ընդունվող երեխայի առանձնահատկությունների ուսումնասիրում, խոսքի, տեսողության, լսողության, շարժողական կարողությունների հետազոտում:
Ուսումնական գործունեության հարմարեցում վեցամյա երեխաների վարքային դրսևորումներին:
Ծանոթացում դպրոցական միջավայրին և կարգուկանոնին:
Սովորեցնել ճիշտ նստելու, ուսուցչի և ընկերների հետ շփվելու ձևերը:
Օգտվել գրքից ու գրենական պիտույքներից, սովորել դրանք խնամքով գործածելու կանոնները:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Կրթության նպատակ հռչակել դաստիարակության և ուսուցման նպատակաուղղված գործընթացը:

Նախնական ուսուցումը հենված է ճանաչողական գիտելիքների, խնդիրների վրա:Նպատակաուղղել գրավոր- բանավոր խոսքի զարգացման մեթոդը՝ ԽԻԿ՝ խթանել, իմաստավորել, կիրառել:

Հայեցի դաստիարակություն

Դաստիարակել բարյացակամ, համարձակ, համերաշխ ու հայրենասեր մանուկներ:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Երկրի սահմանների պաշտպանության գաղափարը հասցնել յուրաքանչյուր աշակերտի հոգուն ու մտքին:

Գեղագիտական դաստիարակություն

Արթնացնել բնությունը պահպանելու ցանկություն,տան, փողոցի, բակի մաքրություն տածելու և խնամելու ձգտում:

Ֆիզիկական դաստիարակություն

Հետևել սովորողների ֆիզիկական զարգացմանը,որպեսզի առօրյա կյանքում դրսևորեն իրենց ֆիզիկական, հոգեկան և մտավոր ունակությունները:

Աշխատանքային դաստիարակություն

Հասնել այն նպատակին, որ յուրաքանչյուր աշակերտ ընկալի ուսման կարևորությունը:Հետևել շրջակա միջավայրի մաքրությանը, պահպանել գեղեցիկը:

Բնապահպանական դաստիարակություն

Բնության մասին զրույցներով աշակերտներին հասցնել բնության,մթնոլորտի ճանաչողության,շրջակա միջավայրի պահպանման գաղափարին:

Դպրոց- ընտանիք կապը

Դպրոցում ստեղծել երեխայի արժանապատվության, ինքնահարգանքի և ինքնագիտակցության զգացումն ուժեղացնող մթնոլորտ:Միավորել դասարանը ընդհանուր նպատակների ու հետաքրքրությունների շուրջ, որոնք երեխաներին վստահություն են ներշնչում, սակայն անպայման հաշվի առնել նաև տարբեր կարծիքներ:

Ծնողներին ներգրավել իրենց երեխաների կրթության գործի մեջ: Ծնողներն անմիջականորեն ազդում են երեխաների բարեկիրթ վարքի, ինքնահարգանքի ձևավորման, առողջության և դպրոցին նախապատրաստվելու գործընթացի վրա:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

01.09.2023 Աշխատանքային պլանի կազմում:

Ծանոթացում դպրոցական կարգ ու կանոնին:

08.09.2023 << Իմ ընտանիքը>> Ծնող. ժողով :
15.09.2023 Ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ստեղծում:
22.09.2022 <<Անկախության օր>>:
29.09.2023 <<Մեր դպրոցը>>:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

06.10.2023 <<Խաղն իմ կյանքում>> – զրույց
13.10.2023 <<Քո առողջությունն ու անձնական հիգիենան>> զրույց:

ՆՈՅԵՄԲԵՐ

03.11.2023 << Սովորենք իրար լսել և հասկանալ>> զրույց- խաղ:
10.11.2023 <<Ով և ինչու է ընտրել իմ անունը>>:
17.11.2023 Զրույց <<Լուսակրի երեք գույները>>:
24.11.2023 <<Պահպանենք վարվեցողության կանոնները>> զրույց:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

01.12.2023 Զրույց <<Ներիր ընկերոջդ>>:
08.12.2023 Դասագրքերի և գրենական պիտույքների ստուգում:
15.12.2023 Ամանորյա բացիկների պատրաստում:
22.12.2023 Նոր տարվա հանդեսին մասնակցություն:

ՀՈՒՆՎԱՐ

27.01.2024 II կիսամյակի խնդրիներն ու պահանջները:
<<Ես զինվորն եմ իմ հայրենիքի>> զրույց:

ՓԵՏՐՎԱՐ

02.02.2024 << Հայրենիքը սկսվում է իմ տնից>>-զրույց:
09.02.2024 Անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում:
16.02.2024 <<Գիրքն իմ ընկերն է>> թեմայով զրույց:
23.02.2024 <<Միասին ավելի լավ է>> զրույց:

ՄԱՐՏ

01.03.2024 Խոսքային վարքաձևեր. ներողություն,խնդրանք, շնորհակալություն:
15.03.2024 Զրույց <<Օրվա ռեժիմը և առողջությունը>>:

ԱՊՐԻԼ

05.04.2024 Զրույց <<Վարքի կանոնները փողոցում, տրանսպորտում..>>:
12.04.2024 <<Պահպանենք բնությունը, պահպանենք կյանքը>> զրույց:
19.04.2024 Զրույց <<Փոքրերի աշխարհը>.:
26.04.2024 Զրույց <<Իմ հեքիաթի հերոսը>>:

ՄԱՅԻՍ

03.05.2024 Զրույց <<Ինչպես եմ ճանաչում աշխարհը>> :

10.05.2024 Զրույց <<Ապավինենք Այբ, Բեն, Գիմ>>-ին:

17.05.2024 Զրույց <<Իմ ձեռքբերումներն ու բացթողումները>> թեմայով:

24.05.2024 Ուստարվա ամփոփում – <<Ի՞նչ տվեց ինձ այս տարին>>: